

ԵՐԿԲԱՐԲԱՌԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ
ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Բառնասյան Ջեմմա

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

barnasyanjemma@mail.ru

DOI: 10.54503/978-9939-970-08-0-20

Բանալի բառեր. երկբարբառ, եռաբարբառ, ձայնավոր, արևմտյան բարբառներ, արևելյան բարբառներ, գրաբար, երկբարբառային արտասանություն:

Հայտնի է, որ հայերենի բարբառների գերակշիռ մասին առավել բնորոշ է պարզ ձայնավորներ և երկհնչյուններ գործածելը: Դրանում համոզվում ենք ըստ հատուկ ծրագրի բարբառների հավաքչական աշխատանքներ իրականացնելիս: Կարելի է վստահաբար ասել, որ հայերենի բարբառների գերակշիռ մասին բնորոշ չեն երկբարբառներն ու եռաբարբառները: Այդ առումով՝ առավել հատկանշական է պարզ ձայնավորներ և երկհնչյուններ գործածելը, ինչպես, ներկայիս ամենամեծ՝ Արարատյան բարբառում, ուր հին հայերենի բոլոր երկբարբառները և եռաբարբառները ենթարկվել են հնչյունափոխության: Օրինակ, ասենք **այ** երկբարբառը բառակցում և բառամիջում դարձել է **է**: Օրինակ՝ *այս>էս, այն>էն, այծ>էծ, լայն>լէն, ձայն>ձէն, փայտ>փէդ, եղբայր>ախպէր* և այլն: Առկա են նաև մասնակի փոփոխություններ, ասենք՝ *խայթել>խէթել-խիտել, փայծաղն>փաձէխ>փիձէխ*, կրկնավոր *փայլփայլել* բայը՝ *փիլփրլալ, պրլպրլալ*: Նաև նշենք, որ գրական լեզվից փոխառյալ բառերում **այ** երկբարբառը պահպանվել է անփոփոխ՝

¹Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977:

հայրիկ-հայրիկ, մայրիկ-մայրիկ, հայելի-հայլի: Կամ, ասենք, գրա-
բարյան **էա** երկբարբառը վերածվել է **է**-ի, լեառն>**լէռ**, կորեակ>
կորէկ, վառեակ>**վառէկ**, ցորեան> **ցորէն** և այլն:

Սակայն հարկ է նշել, որ բարբառների մի մասին (ընդ որում՝
իրարից հեռու ընկած) բնորոշ է շեշտի տակ պարզ ձայնավորի
փոխարեն երկբարբառային արտասանությունը: Օրինակ, ասենք՝
ու պարզ ձայնավորը Ոզմի բարբառում ունի **օու** արտասանություն՝
ջօուր, Սուչավայի բարբառում՝ **ու** >**աու**, ինչպես՝ **անաուն** (անուն),
Ուրմիայի բարբառում՝ ու>ուէ՝ **պուէն** և այլն: Ի դեպ նշենք, որ
երբեմն առկա են երկբարբառացման ոչ օրինաչափ իրողություններ,
ինչպես Համշենի բարբառում, ուր գրաբարյան երկբարբառներին և
արդի գրական լեզվի երկհնչյուններին համապատասխանում են
պարզ ձայնավորներ, ինչպես՝ **ալուր**, **ծուն**, **կէդ**, **լուս**, **թուլ** և այլն:
Սակայն **գազտոդ** (կակուդ), **կըլէօխ** (զլուխ) բառերում
երկբարբառացումն օրինաչափ չէ: Կամ, ասենք, նկատելի է, որ երբ
ռ>ու հնչյունափոխության ենթարկված տարրին հաջորդում է **ք>յ**
անցումը, առկա է երկհնչյունային արտասանություն, ինչպես,
ասենք՝ **ջույս** (չորս), **կույդ** (գորտ) և այլն:

Հայտնի բան է, որ առհասարակ այն բարբառներն են առավել
դժվար հասկացվում, ուր հնչյունափոխվել են ձայնավորները: Այդ
իմաստով հատկանշական է Ագուլիսի բարբառը: Ներկայացնենք մի
քանի օրինակ: Այսպես՝ **ա** պարզ ձայնավորի դիմաց Ագուլիսի
բարբառում գործառում են այլ ձայնավորներ, ինչպես՝ մարդ>**մօրդ**,
քար>**քօր**, շահ>**շէհ**, թան>**թուն**, տանձ>**տունձ** և այլն: Ագուլիսի
բարբառում **ա** ձայնավորը ներկայանում է նաև երկբարբառային **էօ**
արտասանությամբ, ինչպես՝ **բէօրձ** (բարձ), **վէօրդ** (վարդ): Ուշա-
գրավ փոփոխություններ են կրել նաև մյուս ձայնավորները,
ինչպես, օրինակ, **կընակ** (կնիկ) **ի>ա** հնչյունափոխություն, կամ

ասենք՝ *ամպայտք* (անպետք), *այսաղ* (ասեղ), *ուրձ* (որձ): Բերենք օրինակ Ագուլիսի բարբառով.

Էիչարը այգ ա ծնեծ, կօվը՝ ուրձ (Ոյխարը էգ է ծնել, կովը՝ որձ:

Ախչիկըս մաշին չօնի, այսաղալ ա կօր նայամ (Աղջիկս մեքենա չունի, ասեղով է կարում):

Ագուլիսի բարբառի յուրօրինակ ձայնավորական համակարգը միշտ հետաքրքրության առարկա է եղել: Բարբառի ուսումնասիրությանը նվիրված վերոհիշյալ աշխատության մեջ լեզվաբան Մարի Զաքարյանը ներկայացնում է այս յուրօրինակ ձայնավորական համակարգով բարբառին՝ նվիրված ուսումնասիրությունները՝ հատկապես առանձնացնելով 1899թ.-ում բանագետ Գ.Վանցյանի տեսակետն այն մասին, թե Ագուլիսի բարբառը գրաբարից ավելի հին է՝ իբրև ապացույց մատնանշելով, ասենք, *ի* պարզ ձայնավորի փոխարեն *այ* երկբարբառի առկայությունը՝ *մայս* (միս), *քայնթ* (քիթ), *սայրիլ* (սիրել) և այլն: Մ. Զաքարյանն իր աշխատանքում ներկայացնում է նաև այդ տեսակետին հակադրվող Հ.Աճառյանի կարծիքը, թե Ագուլիսի բարբառում առկա *այ* երկբարբառով *հայր, մայր, այծ* և նմանատիպ բառաձևերը ոչ թե ուղղակիորեն գրաբարից եկող հինհայերենյան ձևեր են, այլ արդյունք են *հետադարձ հնչյունափոխության՝ միս> մէս> մայս*: Նմանատիպ հնչյունափոխությամբ կարելի է բացատրել *մայր>մէր>մայր, այծ>էծ>այծ, հայր>հէր>հայր* և այլն: Հեղինակը միանգամայն համակարծիք է Աճառյանի հետ, որ *այ*-ը Ագուլիսի բարբառում ուղղակի նորագոյացություն է:²

Հայերենի ձայնավորների պատմական փոփոխություններից առանձնացնելով երկբարբառայնացման երևույթը՝ կարելի է հետաքրքիր փաստեր նշել հին *ռ* և *ռ* պարզ ձայնավորների փոփոխությունների մասին: Հայտնի է, որ գրառման շրջանում այս տառերով

² Տե՛ս Մ. Զաքարյան, *Ագուլիսի բարբառի բառարան*, Ե., 2008, էջ 48:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 13:

արտահայտվող հնչյունները միանշանակ են եղել բառում ունեցած բոլոր դիրքերում: Այսօր այդ տառերի միարժեքությունն արդեն խախտված է: Բառասկզբի և բառամիջի դիրքերում դրանք միարժեք չեն: Խոսենք **n**-ի մասին: Փոփոխությունը սկսվում է այս ձայնավորի ավելի փակ, նեղ արտասանության միտումով, որի հետևանքը լինում է այն, որ բառասկզբում ստանում է **ni** ձայնավորի մի թույլ երանգ, որն էլ, աստիճանաբար ավելի ու ավելի ընդգծվելով, շեշտի տակ **n** ձայնավորին տալիս է **nio** երկարբառային արտասանություն, այսինքն՝ **nio** երկարբառի արժեք: Նկատելի է (և դա են ապացուցում վերոհիշյալ Ծրագրով հայերենի բարբառների հավաքչական աշխատանքների ընթացքում մեր դիտարկումները), որ **nio** երկարբառային արտասանությունը բարբառից բարբառ ունի հնչման տարբերություն՝ թույլից մինչև ընդգծված երկարբառացում:

Կարող ենք վկայել, որ Վանի, Խոյի, Մարաղայի, Շատախի, Դիադինի և հարակից այլ վայրերի խոսվածքներում առկա ուժեղ երկարբառացման կողքին համեմատաբար թույլ է այդ իրողությունը Արարատյան բարբառի շատ խոսվածքներում: Ասենք՝ Աշտարակի, Օջականի խոսվածքներում առկա է երկարբառային հնչման ավելի թույլ աստիճան: Այլ խոսքով՝ մենք գործ ունենք երկարբառայնացման տարբեր աստիճանների հետ: Կարելի է նաև նշել, որ նույն **n** ձայնավորի երկարբառացումը բառասկզբի դիրքում որոշակիորեն տարբերվում է բառամիջյան կամ բառավերջի դիրքում: Բառամիջում այն պարզապես հանդես է գալիս իբրև **ni** և **o** ձայնավորների սերտ միացություն՝ երկարբառ: Այսպես՝ *junioun* բառակը մի այլ տարածքում հնչում է *juni-kun* և այլն: **ni** ձայնավորի երկարբառացումն առկա է թե՛ շեշտակիր և թե՛ անշեշտ դիրքերում, թեև կարելի է ենթադրել նախապես հենց շեշտակիր դիրքերում այդ երևույթի

առաջացման իրողությունը՝ հետագայում անխտիր բոլոր դիրքերում տարածվելու պատկերով:

Երկբարբառներով ու եռաբարբառներով հարուստ են հայերենի կենտրոնական, հարավարևմտյան և հարավարևելյան բարբառախմբերի խոսվածքները: Անտիոքի տարածքի բարբառներում երկբարբառայնացման գործընթացին մասնակցում են համարյա բոլոր ձայնավորները, նաև յ ձայնորդը: Դրանց զուգորդումներով կազմվում են **ուօ, ուէ, իէ, էու, աօ, քա, իյ, ըու** երկբարբառներն ու եռաբարբառները: Դրանք հետագա զարգացումներ են և չեն հանդիսանում հին հայերենի երկբարբառներից որևէ մեկի հետագա շարունակությունը: Այլ խոսքով՝ նոր գոյացումներ են՝ առաջացած հայերենի պարզ ձայնավորներից: Անտիոքի շրջանի բարբառներից Սվեդիայի բարբառը ամենահարուստն է երկբարբառներով: Հատկանշական է, որ երկբարբառների զարգացումը յուրօրինակ ընթացք է ունեցել այս տարածքում, ուր երկբարբառներ կան հինհայերենյան պարզ ձայնավորների և հին երկբարբառների դիմաց: Բերենք օրինակներ. **էու** երկբարբառ- **դէուն** (տուն), **թէուղթ** (թուղթ), **Աու** երկբարբառ- **շաուն** (շուն), **քաուրտ** (քուրդ), **տըտաում** (դդում), Այ երկբարբառ- **լայս** (լույս), **թայլ** (թույլ), **ծայն** (ծյուն), **ծայթ** (ծիւթ), **Լօ** երկբարբառ- **քօղդ** (ուղտ), **Ուայ** եռաբարբառ- **քուայր** (քույր) Հատկանշական է, որ **ուօ, ուէ, իէ, իէ** երկբարբառները հիմնականում հանդես են գալիս շեշտի տակ, իսկ շեշտազրկվելիս վերածվում են պարզ ձայնավորների: Բերենք օրինակներ Հաջրնի բարբառից: Ասենք, **խտտ** բառը բարբառում եզակի թվում **խուէդ** ցայտուն երկբարբառային արտասանությունն ունի: Հոգնակի թիվը կազմելիս շեշտը տեղաշարժվում է, իսկ երկբարբառը վերածվում է պարզ ու-ի, ինչպես՝ **խուղիկ** (խոտեր) կամ **կուէդ** (գոդ) և հոգնակին՝ **կուղիկ** (գողեր):

Ի դեպ՝ Սվեդիայի բարբառը երկբարբառների օգտագործման մեջ այնքան առաջ է անցել, որ երկբարբառացումն օգտագործվում է որպես քերականական միջոց: Բերենք օրինակներ: Հայտնի է, որ որոշյալ առումով գործածվող գոյականը որոշիչ հոդ է ստանում (նկամ ք): Սվեդիայի բարբառը չի օգտվում այդ միջոցից, բայց այդ նպատակով դիմում է երկբարբառացման հնարավորությանը՝ այդ կերպ արտահայտելով գոյականի որոշյալության հատկանիշը: Իսկ եթե այդ ձայնավորն ինքը երկբարբառով է արտահայտված, ապա սովորականից ավելի երկար արտաբերելով է լուծում որոշյալության հատկանիշը: Այսպես՝ *մուրտ* (մարդ) և *մա՛րտ* (մարդը), *վուրտ* (վարդ) և *վա՛րտ* (վարդը), *լոռ* (լեռ) և *լա՛ռ* (լեռը) և այլն:

Այս բարբառում ձայնավորի երկբարբառացումը և հնչերանգը որոշակի դեր ու գործառական արժեք են ձեռք բերել նաև հոլովական համակարգում՝ հոլովաձևերը միմյանցից տարբերակելու համար: Այսպես՝

Ուղդ.- *շա՛ուն*

Սեռ.-տրական – *շեուն*

Հայց. - *զշա՛ուն*

Բաց. - *բզշուն մընի*

Գործ- *շըննու*

Ներգ. - *ըշա՛ուն*:

Նշանավոր բարբառագետ Ա.Ղարիբյանը քննության է առել Քեսաբի, Բեյլանի, Արամոյի, Սվեդիայի բարբառները՝ վերջինիս մեջ առանձնացնելով Քաբուսիե գյուղի բարբառը՝ որպես միանգամայն ինքնուրույն բարբառ այն հիմնավորմամբ, որ այդ բարբառում չկա Ը հոդը, ուստի առարկայի որոշյալ լինելու գաղափարը բառի շեշտվող ձայնավորը ներսում վերափոխելու միջոցով է կատարվում: Բերենք նմանատիպ առկայացման որոշ օրինակներ: Այսպես՝ անորոշ առումով՝ *քուր* (քար) և որոշյալ՝ *աւ քուր* (այս քարը), անորոշ

առումով՝ *ճիր* (ջուր) և որոշյալ՝ *աս ճայր* (այս ջուրը) կամ, ասենք, *գընազ* (կին) և *աս գընաազ* (այս կինը)⁴:

Իր աշխատության մեջ Ա. Ղարիբյանը ներկայացնում է ևս մեկ իրողություն. այն, որ հնարավոր է երկբարբառային արտասանության շնորհիվ ձևաբանական մի այլ խնդրի լուծում՝ բայի խոնարհման համակարգին առնչվող: Ներկայացնելով Քաբուսիեի բարբառում սովորական ներկա ժամանակաձևը, օրինակ, ասենք, *գէու սուրվի* (սովորում է), *գէու գարսու* (կարդում է) և այլն, նշում է, որ երբ անհրաժեշտ է ցուցական զը դերանունով ուղիղ խնդիր արտահայտել, ապա այդ ժամանակ խոնարհվող բայի շեշտված ձայնավորը արմատական փոփոխության է ենթարկվում՝ պարզ ձայնավորից վերածվելով երկբարբառի: Իսկ նշված բայաձևերն էլ երկբարբառային արտասանությամբ կունենան հետևյալ արտահայտությունը՝ *գէու սուրվուա զը* (սովորում է այն) և *գէու գարտիե զը* (կարդում է այն): Այսինքն՝ երկբարբառացման շնորհիվ ձևաբանական խնդիր է լուծվում: Բերելով նմանատիպ օրինակ և հիմնավորելով Քաբուսիեի բարբառին բնորոշ այդ հատկանիշը՝ Ա. Ղարիբյանը գտնում է, որ այդ երևույթը հիշեցնում է հնդեվրոպական նախալեզվի ձայնդարձը (ալտերանսը), որի պատճառները գիտությանը հայտնի չեն: Ձայնդարձի նմանատիպ հետքեր կան սլավոնական, հունական և այլ լեզուներում: Քաբուսիեի բարբառում կան երկբարբառներ, եռաբարբառներ և մինչև անգամ՝ քառաբարբառներ: Այսպես՝ *տաուռ* (դուռ), *նաուռ* (նուռ), *ամօուռ* (ամառ), *ուօջբ* (աչք) և այլն: Ընդ որում՝ տարբեր ձայնավորներ ձևաբանական նմանատիպ խնդիրներ իրականացնելիս կարող են արտահայտվել միևնույն երկբարբառով: Հարցի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ առկա են հնչյունափոխական շերտավորումներ:

⁴ Տե՛ս Ա. Ղարիբյան, *Հայերենի բարբառների մի նոր խումբ*, Ե., 1958, էջ 81:

Այսպիսով՝ երկբարբառներով ու եռաբարբառներով հարուստ են հայերենի կենտրոնական, հարավարևմտյան և հարավարևելյան բարբառախմբերի խոսվածքները: Անտիոքի շրջանի բարբառներից *Սվեդիայի բարբառը* ամենահարուստն է երկբարբառներով: Հատկանշական է, որ երկբարբառների զարգացումը յուրօրինակ ընթացք է ունեցել այս տարածքում, ուր երկբարբառներ կան հինհայերենյան պարզ ձայնավորների և հին երկբարբառների դիմաց: Սվեդիայի բարբառը երկբարբառների օգտագործման մեջ այնքան առաջ է անցել, որ երկբարբառացումն օգտագործվում է որպես քերականական միջոց՝ այդ կերպ արտահայտելով գոյականի որոշյալության հատկանիշը: Մի խոսքով՝ հայերենի որոշ բարբառներում երկբարբառացումը ծառայել է որպես քերականական ինքնատիպ միջոց:

Jemma Barnasyan-Diphtongization-as a grammatical means in some dialects of Armenian.-The prevailing part of the Armenian dialects is not characterized by diphthongs and triphthongs. We are convinced of this while carrying out 28 collection works with the Armenian dialects. For Armenian dialects the usage of simple vowels and diphthongs is most characteristic, as, for example, in the current largest - Ararat dialect, where all diphthongs and triphthongs of ancient Armenian have undergone a phonetic change. Dialectologist A. Gharibyan studied and appreciated the interesting reality of the transformation of diphthongization into a grammatical means, such as the grammatical means of transition from an indefinite gender of a noun to a definite gender in the dialects of Kesab, Qabusie in Syria. The famous linguist A. Acharyan believes that the diphthongization of simple vowels in the Agulis dialect does not have a deep antiquity, it is a relatively new phenomenon, which is noticeable by the stratification of various phenomena of phonetic changes.

Keywords: diphthong, triphthong, vowel, western dialects, eastern dialects, grabar, diphthongal pronunciation.

Джемма Барнасян - Дифтонгизация как грамматическое средство в некоторых диалектах армянского. - Преобладающей части диалектов армянского не характерны дифтонги и трифтонги. В этом мы убеждаемся при осуществлении коллекционных работ с армянскими диалектами. Для армянских диалектов наиболее характерно использование простых гласных и дифтонгов, как, например, в нынешнем крупнейшем - Араратском диалекте, где все дифтонги и трифтонги древнеармянского претерпели фонетическое изменение. Диалектолог А. Гарибян изучил и оценил интересную реальность превращения дифтонгизации в грамматическое средство, как, например, грамматическое средство перехода от неопределенного рода существительного к определенному роду в диалектах Кесаба, Кабусие в Сирии. Известный лингвист А. Ачарян считает, что дифтонгизация простых гласных в агулисском диалекте не имеет глубокой древности, это относительно новое явление, что заметно по расслоению различных явлений фонетических изменений.

Ключевые слова: дифтонг, трифтонг, гласный, западные диалекты, восточные диалекты, грабар, дифтонгальное произношение.